ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	**Ծաղկաձոր**
ՄԱՐԶ	**Կոտայքի մարզ**

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Քաղաքը իր հիմնական մասով փռված է Թեղենիս լեռան արևելյան լանջին, այն իր նշանակությամբ համարվում է հանրապետության զբոսաշրջության առաջատար կենտրոններից մեկը: Ծաղկաձորը որպես բնակավայր հայտնի է վաղնջական ժամանակներից: Ծաղկաձոր քաղաքի անվանումը կապված է Ծաղկունյաց լեռների անվանումից: Վաղ միջնադարում գավառը հանդիսացել է հայ արքաների որսատեղի: 10-րդ դարում Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը 1003թ. կառուցում սբ. Գ. Լուսավորչ եկեղեցին, այսպիսով հիմք դնելով Կեչառիս վանական համալիրին: Իսկ 1051թ. Սբ. Նշան եկեղեցին: 1203-1214 թթ. Սբ. Նշան եկեղեցու կողքին կառուցվում է Սբ. Կաթողիկեն: Վեցիկ ճարտարապետի ձեռքով կառուցված այս եկեղեցին իր հարդարանքներով Կեչառիսի վանքի եկեղեցիներից ամնաշքեղն է: Այս շրջանում է կառուցվում նաև Սբ. Հարություն եկեղեցին: Միջնադարում ձևավորված վանական համալիրը հանդիսացել է գրչության մշակույթի կենտրոն իր համալսարանով: 2001թ. համալիրն ամբողջությամբ վերականգնվել է և հանդիսանում է Հայ առաքելական եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդանիստ եկեղեցի:

Նախքան խորհրդային կարգեր հաստատելը Ծաղկաձորը վեր էր ածվել Երևանի նահանգի առողջարանային կենտրոնի, որտեղ իրենց ամառային հանգիստն էին անցկացնում նահանգի բաձրաստիճան պաշտոնյաները, որը իրենից ներկայացնում էր մի մեծ բնակավայր:

Խորհրդային տարիներին այստեղ գործում էին շուրջ երեք տասնյակի հասնող պիոներական ճամբարներ և հանգստյան տներ,որտեղ իրենց հանգիստն էին անցկացնում տասնյակ հազարավոր զբոսաշրջիկներ: միաժամանակ քաղաքը հայտնի էր որպես միջազգայնի գիտաժողովների, կոնֆերանսների վայր:

1967 թ. քաղաքում կառուցվեց ԽՍՀՄ Գլխավոր Մարզաբազան, որտեղ իրենց մարզումներն էին անցկացնեում աշխարհի առաջատար հավաքականները և, որը մեծ ճանաչում և հռչակ բերեց նրան: Այսօր այն հանդիսանում է ՀՀ Գլխավոր մարզաբազան և այստեղ կարող են բարձրակարգ մարզումներ անցկացնել 35 մարզաձևերից: մարզաբազայի լավագույն կառույցներից է օլիմպիական ծածկած լողավազանը, որը գործում է շուրջ տարին:

1969 թ. Թեղենիսի լանջին կառուցվեց բազկաթոռային ճոպանուղին, որը դարձավ քաղաքի այցետոմսը՝ քաղաքում ձմեռային հանգիստը ավելի հրապուրիչ և մասայական դարձնելով:

Հետխորհրդային տարիներին Ծաղկաձորը պահպանեց և զարգացրեց իր՝ առողջարանային կենտրոնի ավանդույթները և այսօր Ծաղկաձորը իրենից ներկայացնում է բարեկարգ հրապարակներով, փողոցներով, գիշերային շքեղ լուսավորությամբ, ժամանակակից հյուրանոցներով, հանգստյան տներով, հյուրատներով քաղաք և այն հրապուրիչ է ինչպես ամռանը, այնպես էլ ձմռանը:

Քաղաքի անբաժանելի մասն է կազմում ճոպանուղին, որի 5 կայանները կառուցվել են 2004-2007 թթ. ընթացքում՝ ավստրո-իտալական <<Լայտներ>> ընկերության կողմից: Այս 5 կայաններն էլ իրենց տեխնիկական հագեցվածությամբ և սպասարկման մակարդակով համապատասխանում են ներկայիս միջազգային չափանիշներին: Կառուցվել են նաև շուրջ 60 կմ երկարությամբ սահուղիներ: Այստեղ ձմռան ամիսներին իրենց հանգիստն են անցկացնում ինչպես հանրապետության բնակիչները, այնպես էլ արտերկրներից ժամանած ձմեռային մարզաձևերի ինչպես պրոֆեսիոնալներ, այնպես էլ սկսնակ հազարավոր սիրահարներ: Ճոպանուղու տարածքում գործում են բազմաթիվ սրճարաններ և փրկարարական և բժշկական ծառայություններ;

Քաղաքում գործում են բարձրորակ ծառայություն ապահովող ժամանակակից հյուրանոցներ, հանգստյան տներ և հյուրատներ, որոնք կարող են միանգամից ընդունել վեց հազարից ավելի զբոսաշրջիկներ: Հյուրանոցներն այստեղ ցանկացած ճաշակի և կարգի են: Հյուրանոցներն ունեն միջազգային մակարդակի ընդունելություններ կազմակերպելու փորձ և տարվա բոլոր եղանակներին պատրաստ են հյուրեր ընդունելուն: Դրանցից են՝ <<Գոլդեն Փելիս Ռեզորթ Սպա Ջի Էլ>> 5-աստղանի հյուրանոցը,<<Ծաղկաձոր Մարիոթ>>, << Մուլտի Ռեսթ>>, << Ալպինա>>,<<Արարատ>>,<<Էլեգանտ>> և այլն հյուրանոցներ:

Եվ սա միայն Ծաղկաձորի շքեղ հյուրանոցների մի փոքր մասն է կազմում, քանի որ դրանց թիվը հասնում է մոտ չորս տասնյակի: Ծաղկաձորում գործում է նաև <<Ծաղկաձորի հյուրանոցների միություն>> , որը մեծ ծավալի աշխատանքներ է տանում քաղաքում զբոսաշրջության զարգացման համար, միավորելով այդ բնագավառում աշխատող կազմակերպությունների ուժերը:

Հարուստ է քաղաքի մշակութային կյանքը:

Ծաղկաձորի կրոնա-մշակութային օջախ է հանդիսանում Կեչառիսի վանական համալիրը, որը

ամբողջությամբ վերանորոգվել է 2001 թ-ին: Այն ոչ միայն հանրապետության բնակչության, այլև հանրապետություն այցելած զբոսաշրջիկների սիրված վայրերից է: Այստեղ է գտնվում Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդարանը:

Քաղաքում է գտնվում հայ ժողովրդի պարծանքը հանդիսացող Օրբելի եղբայրների՝ աշխարհում ստորջրյա հնագիտության հիմնադիր Ռուբենի, ԽՍՀՄ_ ում ավիացիոն և տիեզերական բժշկության հիմնադիր Լևոնի, ՀԽՍՀ ԳԱ առաջին պրեզիդենտ և Պետական Էրմիտաժի լեգենդար տնորեն Հովսեփի տուն- թանգարանը: Այսօր այն տունը, որտեղ ծնվել է Լևոն Օրբելին վերածվել է տուն-թանգարանի, ուր փոխադրվել են նրանց գործունեության հետ կապված մեծ թվով ցուցանմուշներ Երևանից, Մոսկվայից և Սանկտ-Պետերբուրգից:

Ամռան ամիսներին անց են կացվում երգ ու պարի երկու միջազգային փառատոներ՝ << Արմենիա>> և <<Ուրախ մոլորակ>>, որին մասնակցում են աշխարի տասնյակ երկրներից ժամանած համույթներ: Ավանդական է դարձել համաշխարհային ճանաչում ունեցող մնջախաղի մեծ վարպետ Լ. Ենգիբարյանի անվան մնջախաղի միջազգային փառատոների անցկացումը քաղաքում: Բազմազան են հանրապետական կարգի մշակութային միջոցառումներ:

Իսկ սուր զգացողությունների սիրահարները կարող են օգտվել << Ձիփ լայնից>>, որը վերջերս է կառուցվել քաղաքում:

Հոկտեմբեր ամսվա առաջին շաբաթ օրը մեծ շուքով է նշվում քաղաքի տոնը, որին մասնակցում են պրոֆեսիոնալ և ազգագրական համույթներ, որը վերածվում է համաժողովրդական տոնի և շարունակվում է մինչև ուշ գիշեր:

Ծաղկաձորը Հայաստանի ամենասիրելի և նրա սահմաններից դուրս ամենահայտնի հանգտյան գոտին է, այն եզակի է նրանով, որ գրավում է զբոսաշրջիկներին ողջ տարին. ձմռանը՝ իր լանջերի շլացուցիչ ճերմակությամբ, իսկ տարվա մնացած եղանակներին՝ գունագեղ և բուրմունավետ բնությամբ: Քաղաքի այս առանձնահատկությունը դարձնում է նրան գրավիչ, հրապուրիչ ու հիշարժան:

. Ծաղկաձորը արժանացել է <<Տարվա բոլոր եղանակներին լավագույն պայմաններ ապահովելու, տուրիզմի զարգացումը խթանելու>> հանրապետական մրցանակին:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծաղկաձոր համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում: Հրազդան մարզկենտրոնից 5 կմ հյուսիս-արևելք: Մայրաքաղաք Երևանից հեռավորությունը կազմում է 50 կմ, << Զվարթնոց>> միջազգային օդանավակայանից՝ 70 կմ, ծովի մակարդակից միջին բարձրությունը 1841 մ է:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	600-700
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-6
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+17,8

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց	-

հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)		
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Հրազդանի շրջան	
3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	50	
3.2) մարզկենտրոնից (կմ)	6	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	80	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	6	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	-	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	5	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1841	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	1618.29հա	16182900քմ
6.Սահմանակից համայնքների անվանումները	Հրազդան,Մեղրաձոր,Սոլակ,Քաղսի,Չարենցավան	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	tsaghkadzor.kotayq@mta.gov.am, meria@tsakhkadzor.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	http://www.tsakhkadzor-kotayk.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	6-04-02, 6-04-03	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	6-04-02, 6-04-03	
11.Համայնքի հեռախոսային կոդը	0223	
12.Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո	
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	2310	
14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ	

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.

1. Մշտական բնակչության թվաքանակը	1546
2. Գրանցված ծնունդների քանակը	15
2.Մահացության դեպքերի քանակը	12
3.Ամուսնությունների քանակը	8
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	583
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	12
7. Կենսաթոշակառուների քանակը	244
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	43

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	5640
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	7
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	600

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	1618
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	59,16
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	-
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	15
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	-
7. Խոզերի գլուխաքանակը	10
8. Գյուղատնտեսական տեխնիկա	-

8.1 տրակտորներ (քանակը)	-
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	-

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	33
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	22
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	1
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	2
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	1
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	11
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո, 1
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	**Փաստացի**
1.Ընդամենը եկամուտներ	170306,7	177283,1
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	75000,0	87396,9
2.1 հողի հարկ	11000,0	16677,2
2.2 գույքահարկ	65000,0	70719,7
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	11826,3	11826,3
3.1 դոտացիա	9170,7	9170,7
3.2 սուբվենցիա	2655,6	2655,6
4. Մուտքեր հողի օտարումից	70000,0	60864,6

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	172608,3	168035,6

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	-	-

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	122395,9	51753,3

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	23 14
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	64966,2
3. Ավագանու անդամների թվաքանակը	7

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Ժամանցի կենտրոնի կառուցում	Ներդրումներ Բյուջեի մուտքերի ավելացում Սուբվենցիա
Արվեստի դպրոցի մասնաշենքի կառուցում	
Ջրահեռացման և մաքրման կայանի կառուցում	
Մանկապարտեզի բակի վերանորոգում	